

Ինչպէս վերն (երգ Գ.) յիշատակեցի, մեզի ժամանակակից երեք հեղինակներ՝ Սարգիս Արքեպ. Սարաֆեանի կաթողիկէ հաւատքն ընդունիլը կը դնեն 1727—40 Հալէպ կամ Լիւբանան Աբրահամ Արծիւեան եպիսկոպոսին (յետոյ կաթողիկոս) ձեռք: մինչդեռ, ինչպէս մտադիր ըրաւ զիս Գեր. Հ. Ռափ. Թ. Վ. Միասերեան, Աբրահայր Անտոնեան Միաբանութեան, իրենց դիւանէն ցոյց տալով, այն Սարգիս եպիսկոպոսն Երուսաղեմի միաբան Խաբլանեանն է, որ Գրիգոր Շղթայակիր Երուսաղեմի Պատրիարքէն (9 Սեպտ. 1715—1749 Փետր. 12 †) զրկուած էր Անտոնեան Միաբանութեան Բրէյմայ վանքը՝ այնտեղ հանդիպող եւ կաթողիկեայ եղող ուխտաւորները լրտեսելու համար: Բայց ասիկայ յարեցաւ Միաբանից, նոյն վանքն երկու տարի մնալէն ետեւ Հռոմ գնաց (Հ. Իս. Սրապեան, «Հանդէս Ա.», 1902, էջ 291—2): Հաւանականաբար իրն է հետեւեալ տապանագիրը, որ կը գտնուի Հռոմայ կաթողիկեայ Հայոց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցին, որուն օրինակն ինչպէս նաեւ Հռոմ գտնուած ուրիշ հայ տապանագիրներ զրկեց ինծի վերջերս Հռոմէն Գեր. Անտոն Վ. Իսկէնտերեան, Գատըքէյի հայ կաթողիկեայց ժողովրդապետը, որուն նաեւ հրապարակաւ կը յայտնեմ շնորհակալութիւններս:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐԳՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՀԱԿԵՐՏԻ ՏԻՐԱՑՈՒ ՍԻՄԷՈՆԻ ՈՐ